այդ նպատակով ներքևից բարձրացրած հենապատի վրա, որով հարմարություն է ստեղծվում պատշգամբի տակ պահեստի համար մի զետեղարան ունենալու։ Նոր ժամանակներում ավելի տարածված է առջևից փայտե պատշգամբ շինելու սովորությունը, մանավանդ Խնձորեսկում, որտեղ հեռվից նայողը տեսնում է լեռնակողին կպցրած պատշգամբների անկանոն հարկեր և չի նկատում, որ դրանք մեծ մասամբ քողարկում են խորքում գտնված քրտատակնէրի բերանները։ Խնձորեսկի նույնիսկ Մելիք Փարմազի տան հին մասում եղած երեք սենյակներն իրենց ետևի կողմերով մտած են քերծի մեջ, առջևից ունենալով և՛ դալանդէր, և՛ պատշգամբներ։

Շատ կարևոր կլիներ մանրամասն ուսումնասիրությամբ պարզել, թե արդեն դատարկ թողած կամ տակավին բնակելի քրտատակնէրից որո՞նք ունեն հնագույն ծագում։ Գիտարշավի ժամանակ ստացած շտապ տպավորությունները թույլ են տալիս այն ենթադրությունը հավանական համարել, որ դրանցից շատերը ծագել են այն ժամանակներից, երբ Զանգեզուրի ցածրադիր մասերը դեռ դուրս եկած չեն եղել ջրի տակից։ Առանձնապես ուշադրության են արժանի այն քարայրները, որոնք ծառայել են որպես առանձնարաններ զանազան ճգնավորների, մարտիրոսների համար և այժմ, որպես ուխտատեղիներ, զարդարված են խաչերով և սուրբ սեղաններով, օրինակ՝ մի անհայտ Նահատակի և Մարտիրոսի քարայրները Գորիսում, ս. Սարգսինը՝ Լորա-ձորում Լեռնաշենի (Շենաթաղի) մոտ, Սիսիանինը (Սիսավանինը), Կարմիր վանքի տակինը, մանավանդ Խուտուփինը։ Անշուշտ քարայրների այդ պաշտամունքը, որը համատարած է գավառի բոլոր մասերում, գալիս է այն ժամանակներից, երբ մարդս բնակվում էր գլխավորապես քարայրների մեջ և որևէ մեկը նրանցից այս կամ այն պատճառով համարվել է ավելի բախտավորություն տվող, ինչպես ավելի ետին դարերում ծագել են սուրբ տեր, սուրբ օջախներ և՛ Լեռնային Ղարաբաղում, և՛ Լոռում, և՛ Գանձակի գավառում։

Քարայրները ծառայում են ոչ միայն որպես բնակարաններ կամ մառանիէր, այլև որպես արհեստանոցներ (հին Գորիսում բրուտանոցը), ոչխարի գոմ, Ղզիլշաֆակի (Շիլարի) մոտ՝ խոտանոց։ Հին Գորիսում ճամփորդների մարվանսարան էլ բաղկացած էր մի քանի քարայրներից, գյուղի ներքևի թաղում, գլխավոր ճանապարհի կողքին։

Գավառի մյուս շրջանների համար Բուն Զանգեզուրից դուրս, որպես բնակարանի ավելի տարածված ձև, բնորոշ է Լեռնային Ղարաբաղում և Գանձակի գավառում ևս պատահող ղարադամը կամ մէծ տունը, որը Սիսիանում և Կապանում կոչվում է հացատուն, իսկ Լոռում՝ գլխատուն։ Սա հայկական ծագում ունեցող բնակչության երդիկավոր տների մի տեսակն է, որը կրկնվում է շատ ավելի դեպի արևմուտք ձգվող հայաբնակ գավառներում, մինչև Վանա ավազանը, Կարճկան, Մուշ, նույնիսկ՝ Խարբերդ, ինչպես և Վրաստանի այն գավառներում, որտեղ վերաբնակեցված են հայեր։ Հացատունը մի քառակուսի շենք է՝ կիսով չափ գետնի մեջ նստած։ Գերադասորեն ընտրում են նրա համար լեռան կամ բլրի լանջ, անպատճառ ունենում է առջևից, աջ և ձախ կողմից առաջ քաշած պատերով գրկած պատշգամբ— էյվան կամ սրհար, սահար։ Այդ պատերից մեկի մեջ շինված է լինում օջախ-բուխարի, որտեղ կերակուր է պատրաստվում տաք ամիսներին։ Հացատունի թե՛ երկարությունը և թե՛ լայնու-